


մանակ կարող է յետ ստանալ, իսկ իր մահուանից յետոյ պէտք է բացուի ի ներկայութեան Կ. Պոլսոյ Ազգ. քաղաքական ժողովոյ, և գործադրուի ըստ կտակի տրամադրութեան: Այս առթիւ «Փոլնջը» գրում է. «Ի Մարսիլիա վախճանեալ Կիւմիւշեան Յովհ. էֆ. կտակն որ անցեալ շաբթու անյայտ կը համարուէր և կամ դուզնաքեայ ինչ, այս չորեքշաբթի (16 հոկտ.) յայտնուեցաւ իր բարեսիրական համրաւին արժանի վիճակին մէջ: 10,000 չիրայ կտակեր է զանազան հաստատութեանց համար, պայմանաւ որ այս դումարին կիսով Միւլք կալուածներ դնուին, իսկ միւս կէսը շահագործուելով 100-ին 40 ր յատկանայ Կեսարիոյ Կիւմիւշեան (իւր հիմնած վարժարանի), 10-ը ս. Էջմիածնի Մայր Աթոռոյ, 10-ը Երուսաղէմի, 5-ը ս. Փրկչի հիւանդանոցի, 15-ը աղքատ տղոց համար դպրոցական գրքերու տպագրութեան, և 20-ը տարուէ տարի բարգուի դրամագլխոյն վերայ: Այս կտակին Միւթէվէլլի (ինամակալ կտակահատար) կարգուած է ժամանակին Պատրիարքը: Կտակագրին ընթերցմանէն ետքը Սրբազան Պատրիարք մաղթանքներ արտասաներ է հանգուցելոյն հոգւոյն համար, և բոլոր ներկայ եղողները յօտնկայս մեծարեք են անոր յերատակը»:



ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԱՌԱՊԱՐԻ ԿԱՄ ԶՈՒԱՐԹՆՈՅ ԵԿԵՂԵՅԻՆՍ.

Ա.

Խանգարած եկեղեցին

Ս. Էջմիածնից չորս վերս հեռաւորութեամբ դէպի արևելք, Երևան տանող պողոտայից քառորդ վերատաշափ դէպ հարաւ, բարձրաւանդակների վերայ տեսնուում են ընդարձակ աւերակների կրազանգ բեկորներ՝ գեանի մակերևոյթից երկու սաժենաչափ բարձրութեամբ: Դրանք Վաղարշապատի Առապարի կամ Զուարթնոց եկեղեցու աւերակներն են, որոնք վաղ շատ վաղ ժամանակներից տեղական ժողովրդին յայտնի են միայն Խանգարած կամ Հանգարած եկեղեցի անունով:

Խանգարած եկեղեցին Փրկչի 1000 թուականին ար-

դէն խանգարուած՝ անուշադիր չէ մնացել հնասերներից, որոնք, հիացած կրազանգ վիթխարի բեկորների վերայ, հեռանում էին կրկնելով մեր պատմիչների բացականչութիւնները—արդարեւ «զարմացուցիչ տեսողաց, մեծաչէն եկեղեցի, բազմապայծառ փարախ բանաւոր հօտից»: Երբեմն էլ, ամառուայ շոքից ու խորշակից տանջուած գեղջուկ անցորդն ու տուարածը հրապուրուել են դէպի Խանգարած եկեղեցու բեկորները՝ նրանց հովանու տակ հանգստանալու: Պատահում էր, որ վաղարշապատցիք կամ Ս. Էջմիածնի միաբանները իրանց բարեկամին դէպի հեռաւոր օտարութիւն ճանապարհ դնելիս՝ Խանգարած եկեղեցու դերբուկների տակ վերջին հրաժեշտի ողջոյններն էին տալիս ու առնում: Բուն ժողովուրդը, որ ընդհանրապէս յարգում է եկեղեցիների աւերակները որպէս նուիրական սրբավայրեր և ուխտատեղիք, հակառակ այդ ընդհանրացած սովորութեան՝ անտարբեր է եղել միշտ դէպի Խանգարած եկեղեցին և ոչ մի բարեպաշտական ձգտումն չէ տածել դէպի այն: Այնտեղ չէր վառուում մոմ ու ճրագ, չէր ծխում խունիկ ու կնդրուկ, չէր թողնում քարերի ձերպերում կամ մացառների վերայ հանդերձից ձուէնների, որոնցով ընդհանրապէս զարգարուած են լինում խաչքարերն ու աւերակ եկեղեցիների մօտ եղած մատուռները:

Մինչ Խանգարած կամ Զուարթնոց եկեղեցին ժողովրդից այսպիսի անուշադրութեան էր մասնուած՝ Ս. Էջմիածնից դէպի հարաւ արեւմուտք, վերստաչափ հեռաւորութեամբ, արաբերի մէջ մի ժայռ քար, որի վերայ խաչերի անարուեստ քանդակներ կան, բաւական ուխաւորներ է գրաւում: Այդ քարը կոչւում է Զամչրագ, և այցելուն այնտեղ տեսնում է եւ ճրագ եւ մոմի եւ խնկի մնացորդներ: Խաչի նշաններ կրող այս սև անտաշ քարը ժողովրդից յարգւում է որպէս ուխտատեղի, իսկ մի հոյակապ եկեղեցու վիթխարի աւերակների մնացորդ բեկորները առանց ուշադրութեան էին մնում: Մինչև անգամ զրոյցը, թէ Խանգարած եկեղեցու սների տակ ամփոփուած են Ս. Լուսաւորչի մասունքները, արձագանք չէ գտել ժողովրդի մէջ և չէ շարժել նրա սիրտը

դէպի այդ եկեղեցին:

Եթէ կար մի օր, երբ կարելի էր Խանգարած եկեղեցու շուրջը տօնական հագուստներով մարդիկ տեսնել, այդ Համբարձման տօնի նախընթաց չորեքշաբթի օրն էր, երբ Վաղարշապատի նորաստի հարսն ու աղջկունք դուրս էին գալիս Խանգարած եկեղեցին շրջապատող դարաւանդները՝ անթառամ ու սմբուլ կոչուած ծաղիկներ քաղել փնջելու: Բայց այդ օրն էլ ոչ մի բարեպաշտական արտայատուծիւն չէր լինում՝ դէպի եկեղեցու աւերակները: Այդ դրօսանքը ամենևին կաս չունէր Խանգարած եկեղեցու հետ և դրօսանքի առթիւ թով եղած խօսակցութեան միջոցին յեղյեղուում էին միայն «գնանք դուրը ծաղիկ քաղելու, գնացինք դուրը, դուրում ծաղիկ քաղեցինք» և այլն:

Բ.

Ճարտարապետութեան զարգացումն Հայաստանում Է- ժի դարը:

Չուարթնոց եկեղեցին կառուցել է Է. դարում Ներսէս Գ. Շինող կաթօւղիկոսը: Հաղարաւոր տարիներէ հետէ Չուարթնոց եկեղեցու աւերակները լուռ վկաներ էին Ներսէս Գ. ի շինարար լինելուն: Ներսէս Գ. շատ եկեղեցիներ է կառուցել, բայց այդ բոլորից շէն է մնացել միայն Խորվիրապի վանքը. Դուինում նրա կառուցած Ս. Սարգիս եկեղեցու տեղն անգամ յայտնի չէ: Եթէ Ներսէս Գ. ի շինած բոլոր եկեղեցիներից ոչ մէկն էլ մնացած չըլինէր, Չուարթնոց եկեղեցու աւերակները բաւական էին նրան ընծայուած Շինող մականունը արդարացնելու: Չուարթնոց եկեղեցու աւերակների դիրքուկները նախ քան պեղումները զարմացնում էին տեսնողներին. այժմ, որ եկեղեցու ամբողջ յատակը բացուած է և մեր առաջն են հաստաբետ սների խարխոսները, կողմնակի փոքր սների խարխոսներն ու խոյակները և միջակ սների արծուեքանդակ խոյակները, մի խօսքով, եկեղեցու ներքին կազմը, — արդէն զարմանում ենք ու սքանչանում:

Է. դարը թէև մահմետականութեան զօրութեան և քրիս-

տոնեայ ժողովրդի տառապանքի և մարտիրոսութեան շրջան էր, բայց և քրիստոնէական տաճարների շինութեան և վերաշինութեան դար: Արարական հրոսակների հետ Հայաստան մտաւ և արարական կամարների շինութեան հմտութիւնը, որ միախառնուելով բիւզանդական ճարտարապետութեան հետ՝ սկիզբը դրեց հայկական շինուածական ճարտարապետութեան: Հայ իշխաններն ու հոգևորականները չէին կամենում իրարից յետ մնալ հոյակապ տաճարների կառուցման գործում: Վեցերորդ դարի վերջին քառորդի կամ եօթներորդ դարի սկզբի ձեռակերտներից առաջինը պէտք է համարել Տիկոսի Ս. Երրորդութեան տաճարը արևմտեան Նիրակի արևմտեան սահմանի ծրի վերայ:


Հանգուցեալ Ալիշանը կարծում է, որ Տիկոսի տաճարը կառուցուել է Ե. դարի վերջերում՝ Յովհան Մանդակունու օրով: Այս եկեղեցու լոյստաձև կամարները Դերսիէ ճարտարապետը համարում է ոչ բիւզանդական, այլ հնդկական ոճ. որովհետև նրա կարծիքով եկեղեցու շինութեան ժամանակ արաբները դեռ չէին մտել Հայաստան: Դերսիէ կարծում է, որ արաբները քրիստոնէաներից են փոխ առել այդ ոճը (Նիրակի երես 131—135): Տիկոսի արձանագրութեան անունները որքան և Ալիշանը կապում է Յովհան Մանդակունու ու նրա ժամանակի նշանաւոր անձինքների հետ, բայց մենք կարծում ենք, որ արձանագրութեան մէջ յիշուած Յովհան հայրապետը ոչ թէ Յովհան Մանդակունին, այլ Յովհան Բագարանցին, կամ ուղիղ ևս՝ Յովհան Բագրևանդացին է, որ իբրև հակաթու Մովսէս ու Ռշուունի Արրահամ կաթուղիկոսների՝ նստում էր Յունաց բաժնում: Հ. Ալիշանի առաջ բերած արձանագրութեան մէջ կայ Մանան հաղարապետ, որի աւիթով Ալիշանը ասում է, թէ անձանթ է իրան Ե. դարում Մանան անուն: Արձանագրութեան մէջ յիշուած են Ս. Սարգիս Ներսէս և, եկեղեցու որպէս կառուցանող՝ Սահակ Կամսարական: Ըստ Սերէոսի (գլ. ճԶ.—ԺԶ) է. դարի սկզբին կային Մամակ Մամիկոնեան, Սարգիս և Վարադ—Ներսէս Վահեռունիք, Սահակ Մամիկոնեան, Սահակ Արևնեաց: Եթէ ընդունենք Տիկոսի վանքը շինուած է. դարի սկզբում՝ այն

ժամանակ նրա շինութեան արձանագրութեան մէջ պատմութեան անծանօթ Մանսնը կարելի է փոխել Մամալի. Յովհանն Կաթողիկոսն էլ՝ Յովհանն Բագրևանդացի հակաթու Մովսէսի ու Արրահամ Ռշտունու, Ս. Սարգիսը՝ համարել Սարգիս Վահեռունի, որ իբրև ապստամբ ձեռքակալուելով յոյն զորավար Հերակլից՝ զլիսատուեց իւր հարազատ Վարազ-Ներսէհի հետ Կարնոյ քաղաքում: Գլխատուելու ժամանակ Վարազ-Ներսէհը ասում է. «Վիճակ արկցուք թէ զո՞ առաջի սպանցեն»։ Սարգիսը պատասխանում. «Ես այր ծեր եմ և մեղաւոր. աղաչեմ զքեզ զպարգևսդ այդ ինձ շնորհեցէք» թող զի փոքր մի հանգեայց և ոչ իսկ տեսից զմահ ձեր» (Սեբ. գլ. Է): Այսպիսի անձնուէր մարդ արժանի է սուրբ կոչուելու: Սահակ Կամսարականը մնում է անյայտ:

Տիկոուից յետոյ է. դարի երկրորդ եկեղեցին է Մրենոյ կաթողիկէն, որ, ըստ Այիշանի՝ կառուցել է Գաւիթ Սահառունի իշխանապետը 613-4 թուին Փրկչի (Շիրակ երես 137): Սամուէլ Անեցի ասում է. «ՈՒԵ... Շինուած կաթողիկէին Մրենոյ» (երես 78):

Է. դարի առաջին քառորդին Կոմիտաս կաթողիկոսը վերաշինում է հիմքից Ս. Հռիփսիմէի տաճարը և Վաղարշապատի կաթողիկէի փայտածածքը փոխում է քարի. նորոգութիւն է անում և որմերում, որ թէև Ս. դարի երկրորդ կիսում Վարդանանց ժամանակով եղած աւերածութիւնից նորոգուել էր Վահան Մամիկոնեանի ձեռքով, (Վաղար Փարպ. 22) բայց դարձեալ նորոգութեան պէտք ունէր: Է. դարի երկրորդ քառորդին Եզր կաթողիկոսը վերաշինում է Ս. Գայիանէի վանքը: Յետոյ Ներսէս Գ. Շինող, ի միջի այլոց, շինում է և Առապարի կամ Զուարթնոց եկեղեցին: Է. դարի վերջին քառորդին Սահակ Զորափորեցու կաթողիկոսութեան ժամանակ Գրիգոր Մամիկոնեանը կառուցանում է Արուծ աւանի եկեղեցին:

Է. դարի ընթացքում շինուած եկեղեցիքը մեծ են, վեհ և հոյակապ. քանդակներ համարեա չունին. տանիքի լուսամուտաների և դռների քիւերը շատ պարզ են, լուսամուտները պայտաձև կամարով են, հովանաւորուած

այս  ձև քիւով. պատաշարի քարերը լա-
յղկուած չը լինելով՝ եզրներով էլ միմեանց չեն մածուցուած.
քարերի եզրները թեթև կերպով առնուած են (տաշուած),
այնպէս որ շարքերն իրարից ջոկնուում են նկատելի դժերով:
Գմբէթը, որով պսակաւորուում է տանիքը, բուժ սրածայր է,
կարճ պարանոցով (Հռիփսիմիի վանք) և շերտաւոր: Ներքին
կամարները թէև առանց սեթևեթի, բայց վսեմ են: Այսպէս
ենք նկատել ընդհանրապէս է. դարի ճարտարապետութիւնը:
Այս բանը աչքի է ընկնում մանաւանդ դարի առաջին կէ-
տում շինուած եկեղեցիներում: Բացառութիւն են կազմում
Մրենի կաթուղիկէն՝ արեւմտեան դրան վերև ունեցած մարգ-
կային կերպարանքի բարձրաքանդակով, որ քստ մեզ յետոյ է
փորած, և Առապարի Զուարթնոց եկեղեցին՝ թռչուն պտուղ
բոյս և այլն ներկայացնող քանդակներով:

Հեռոյ՜հեռէ եկեղեցական շինուածքները որքան նրբանում՝
այնքան և մանրանում են, դառնում են վայելուչ և գեղե-
ցիկ, բայց ոչ վեհ և խորհրդաւոր: Բազմանում են քանդակ-
ները և բազմադանութիւն ստանում. այս՝ Բաղրատունեաց
Ժամանակ. իսկ ժ. Բ. դարում, Զաքարէ սպասալարի որով, փոք-
րիկ տաճարների առաջ շինուում են մեծ և ընդարձակ գաւիթ-
ներ՝ մեծ մասամբ չորս միակտուր բարակ սիւնների վերայ
հանդչող լայն կամարներով: Տաճարներին աւելանում են մանր
մատուռներ և կցորդներ, որով գլխաւոր տաճարը կորցնում է
խւր անհատական վսեմութիւնը, խճողուելով իրան կից շինու-
թիւնների մէջ. այսպէս են Հոռոմոսի, Հառիճայի, Հաղբա-
տու, Սանահնի, Բագնայրի տաճարները: Մինչև ժ. Գ. դարը
եկեղեցական շինուածքների մէջ իրանց ճարտարապետութեամբ
նշանաւոր են Անույ կաթուղիկէն, Սանահնոյ, Հաղբատի
և մանաւանդ Յովհաննավանքի տաճարները: Վերջինս, որ
Վաղարշապատից 25 վերստ հեռաւորութեան վերայ է գըր-
նուում և մինչ ժ. Ե. դարը եղել է Ս. Էջմիածնի դպրատունը,
կործանուելու վերայ է:

Գ.

Չուարթնոց եկեղեցու մակարդակի նկարագրութիւնը, նրա աւերման հաւանական ժամանակը, և նմանօրինակ եկեղեցու կառուցումն Ա.Ն.իում:

Չուարթնոց եկեղեցին, ինչպէս ասացինք, է. դարում կառուցուած եկեղեցիներից մէկն է. բայց, հակառակ այդ դարում կառուցուած եկեղեցիների պարզ կերտուածքի, հոժ է քանդակներով. այդ իսկ պատճառով մեր պատմիչներից կոչուել է «զարմացուցիչ տիեզերաց» և այլն: Չուարթնոց եկեղեցու յատակն ամբողջապէս բացուած է Մայր Աթոսիս միարան բարձր. Խաչիկ վրդ. Գաղեանի ջանասիրութեան և նախանձելի հետաքրքրութեան շնորհիւ: Հ. Խաչիկը պեղումն սկսեց 1900 թուի Յունիս ամսին և առաջ տարաւ մեծ յաջողութեամբ:

Բացուած յատակը ցոյց է տալիս, որ եկեղեցին եղել է բոլորշի՝ արևելեան կողմում, սեղանի ետևը, աւելացրած քառանկիւնի մի կցորդով, որ հաւանականօրէն աւանդատուն պէտք է եղած լինի, որովհետև սեղանի աջ և ձախ կողմերում անհնարին է եղել աւանդատներ շինել, ինչպէս յատուկ է Հայոց եկեղեցիներին՝ եկեղեցու բոլորակութեան պատճառով: Բեմը մի արշինից աւելի բարձր է և ունի երեք սանդուխ — երկուսը բեմի աջ և ձախ կողմերում և մէկն էլ բեմի առջևից:

Բեմի վերայ եղած քարակոյտներն ու կրպանդ բեկորները մարբելիս՝ երևեց նրանց մէջ մի մոզայիք խաչի մնացորդ: Սեղանի ետևը կայ խաչաձև փորուած միակաուր քարից մի մեծ աւազան: Եկեղեցու հիւսիսային դրան բարաւորի տեղը դանուել է կոթողաձև մի սեպագիր արձանագրութիւն:

Եկեղեցին բաւական մեծ է և ընդարձակ: Այդ ընդարձակութեան վերայ կենարոնը ծրում են դմբեթաբարձ հաստարեսա չորս մեծ սների խարխիսները. սոցա ետևը կան չորս միջակ սների խարխիսներ էլ. միջակ սները պսակաւորուած են եղել այն մեծ, արծուեքանդակ միակաուր խոյակներով, որոնք աչքի են ընկնում իրանց խոր-

Հրդաւորութեամբ: Բացի այս սներից՝ կան տանն և ութ փոքր սներ էլ միակտուր քարից, խարիսխներով, գլանաձև բնով և խոյակներով: Այս փոքր սները սկսուելով բեմի մի թևից ու շրջան կազմելով՝ վերջանում են բեմի միւս թևի մօտ: Փոքր և միջակ սների վերայ հանդէս էն երբեմն որմերից դէպի կենտրոն ձգուող կամարները, որոնք ապա աստիճանաբար բարձրանալով դադար են առել մեծ սների վերայ, այդ տեղ դադար են առել և մեծ սները միացնող միջին կամարները, կենտրոնում կազմելով մի օղակ, որի վերայ բաղմել է գմբէթը:

Սների դասաւորութեան նայելով եկեղեցին կազմուած է եղել չորս հաստահեղոյս սների միջև՝ գմբէթի տակը, տարածուող միջնափայրից, ուր ժամերգութիւնն է կատարուել բեմի առաջ, և որմերի ու սների միջև եղած կիսարտոր դաւթից, ուր ժողովուրդն է կանգնել: Սների թիւը 26 է, չորսը մեծ, կամ ինչպէս Յովհաննէս պատմաբանն է ասում՝ հաստահեղոյս չորսը միջակ՝ մեծ սների ետևը, արծուեքանդակի միակտուր կապտաուուն կարծրաքար խոյակով, և տանն և ութ էլ փոքր, կապտաուուն կարծրաքար, առանց քանդակի, միակտուր խարսխով և նոյնպիսի բայց կողովաձև, հիւսկէն խոյակներով, որոնց ճակատին, բոլորակի մեջ, խաչաձև նշանակուած են շինողի անուան սկզբնատաւերը յունարէն ու ուուցիկ գրերով:

Բարձրաքանդակները, որոնցով զարդարուած է եղել եկեղեցին (տես Արարատ 1906 թ., Սեպտեմբեր, եր. 381) բազմաթիւ են և բազմազան, բայց չունին Բագրատունեաց ժամանակի եկեղեցիների քանդակների նրբութիւնն ու գեղեցկութիւնը: Զուարթնոց եկեղեցին ամենահին բոլորշի քանդակներով զրուագաւորուած և մի հատիկ բազմասիւն եկեղեցին է: Տեսնողներն ասում են, որ շինուած է Կ. Պոլսոյ Ս. Սովիայի հեռուողութեամբ, բայց հայկական ճարտարապետութեան մեջ ինքնատիպ մի նմուշ է: Զուարթնոց եկեղեցուց մօտ քսան տարի առաջ Կոմիտասից վերաշինուած Ս. Հախփսիմի տաճարը և վերանորոգուած Վաղարշապատի կաթուղիկէն (Ս. Էմիածինը) և մօտ 15 տարի առաջ եղբից

վերաշինուած Ս. Գայիանէի վանքը՝ ինչպէս ասացինք, քանդակներ չունին, լուսամուտներէ ու ասնիքի քիւերն էլ շատ պարզ են: Աչքի առաջ ունենալով, որ Զուարթնոց եկեղեցին քանդակ ունեցող առաջին եկեղեցիներէից մէկն է, պէտք է դարմանալ՝ որ այդ առաջին քանդակներն ևս բաւական նրբութիւն ունին: Եկեղեցու յատակը և որմերը արշնաչափ բարձրութեամբ ներսի կողմից բացուած են, իսկ դրսի կողմից՝ ոչ բոլորովին ուստի և չենք կարող որոշ մի բան ասել դրսի քանդակներէ մասին: Մեր նպատակն էլ չէր աւելի մանրամասնաբար նկարագրել այդ եկեղեցին, մեր պարտականութիւնն էք հարեանցի կերպով պատկերացնել այն ընթերցողներին:

Եկեղեցու շինութեան և աւերման մասին պ. Կ. Կոստանեանը գրում է. «Մխիթար Ա յրիվանեցին 641—690 թուականների մէջ է դնում նրա շինութիւնը, և թերևս Ամուել Անեցուց ասնելով՝ ասում է. «Շինողն ներսէս շինէ զառապարի Ս. Գրիգորն, զգարմացուցիչն ակեղերաց, որ քակեցաւ ի տաճկաց» (Ս. Լուսաւորչի աջը, էր. 26): Բայց ճշտել, թէ երբ է փլուել ու կործանուել՝ դժուարին է:

Ը. դարի պատմիչ Ղևոնդը (հրատ. Կ. Եղեան, գլ. Է) նկարագրում է Ս. Գրիգորի միաբանների կոտորուելը՝ Արզլ — Մելիքի օրով (որ իշխում էր 685—705 թիւը), որովհետև նրա իշխանութեան 16-երորդ տարին Մահմետ զօրագլուխը եկաւ Հայաստան և երկու տարուց յետոյ էլ սկսեց իւր աւերմունքը Ս. Գրիգորում, այդ ուրեմն եղաւ 703 թուին: Ս. Գրիգորի աւերման համանման պատմութիւնը Ատեփան Ասողիկ Ժ—ԺԱ դարի պատմիչն էլ ասնելով Ղևոնդից՝ աւանշում է (էր. 123): Սակայն այս աւերումը, եթէ Զուարթնոց եկեղեցու վերաբերութեամբ նկատենք, վերջնականը չէր: Նոյն պատմիչը իւր պատմութեան վերջընթերթէ. գլխում Քաղաքագաշտի Ս. Գրիգորը արդէն աւերուած փլած և կործանուած է ներկայացնում:

Ամուել Անեցին գրում է. «210. Ս. Գրիգորի վանքն այրեցաւ: Եթէ Ս. Գրիգորի վանք համարենք Զուարթնոց եկեղեցին՝ ուրեմն աւերուել է այն այրուելով փրկչի 740 թուին, և յիրաւի բացուած յատակի քարերը ենթար-

կուած են երևում հրայրեցութեան:

Թէև հանդուցեալ Յովհաննէս եպիս. Շահխաթունեանը (Ստորագրութիւն կաթ. էջմիածնի հատ. Ս. եր. 289) առնելով թովմա Արծրունուց՝ գրում է, որ Գէորգ Ս. կաթուղիկոս Աշտարակեցին թողնելով Գուինը՝ բնակութիւն հաստատեց Նոր—Բաղաբի (Վաղարշապատի) Ս. Գրիգորում, և Գէորգի հայրապետութիւնը ընկնում է ըստ Ասողկի 798—801 թուին, ըստ Շահխաթունեանի (եր. 189) 792—795, ըստ Սամուէլ Անեցույ ԶՂԲ=792—95, սակայն թումայի աւանդածը չի կարելի անպայման ձիշտ համարել, որովհետև ոչ մի պատմիչ չի հաստատում նրա ասածը. մնում է ընդունել որ ըստ Սամուէլ Անեցու 740 թուին եկեղեցին Զուարթնոց այրուել է, և բոլորովին անհարգաբնակ մնացել: Այսպէս դատելով Զուարթնոց եկեղեցին շէն է մնացել միայն իւր հիմնարկութեան ժամանակից սկսած մինչև աւերումն 648—740 թ. շուրջ մի հարիւր տարի և Յովհաննէս պատմաբանի ժամանակ մօտ հարիւր յիսուն տարուայ աւերակ էր, որովհետև Յովհաննէսի կաթուղիկոսութիւնը ընկնում է 899—926 թիւը: Սա էլ Ղևոնդ պատմադրի աւանգած դէպքը Ս. Գրիգորի վանականների կոտորման մասին կրկնում է, բայց ուրիշ իշխանի և ուրիշ տեղի Ս. Գրիգորի անուամբ: Ըստ Յովհաննէս պատմադրի՝ այդ Ս. Գրիգորը գտնուում է Բագուան գիւղում, աւերող սասիկանն էր Եղիա, աւերումն կամ կոտորածը տեղի է ունեցել Յովսէպ կաթուղիկոսի օրով 790 թուին, որ Հարուն—ալ—Աաշիղի ամիրապետութեան ժամանակին է ընկնում: Ի նկատի ունենալով որ Բագուան գիւղում պատմութեան մէջ յայտնի Ս. Գրիգորիայ, որը յիշում են Ղազար Փարպեցին (ՀԶ.), Գարագաշեանը (Քննակ. պատմ. մասն Գ. եր. 250) և Սամուէլ Անեցին (ՈՂԹ. եր. 85), և վերջինս կրկնում է աւերումն Յովհաննէս պատմաբանի ձեռով, մինչ Յովհաննէս կաթուղիկոսը կրկնում է Ղևոնդի և Ասողկի ասածը, միայն ժամանակի աւերողի և տեղի փոփոխութեամբ, գործողութիւնը թողնելով նոյնը, — մենք հաւանական ենք կարծում, որ Բագուանի Ս. Գրիգորն է աւերածը և ոչ Զուարթնոց եկեղեցին, որ այրուել էր արդէն 740 թուին:

Առաջարկի եկեղեցու հիմնարկութիւնը նկարագրելիս՝ Սերէոսը անուանում է այն Զուարթնոց եկեղեցի. բայց յետին պատմիչները եկեղեցու հիմնարկութեան յիշատակի հետ կապուած տեսնելով Ս. Գրիգորի անունը, եկեղեցին պարզապէս Ս. Գրիգոր կոչեցին: Առաջին անգամ Աւետիք պատմիչն է այդ եկեղեցին Ս. Գրիգոր անուանում և այնուհետև Ս. Գրիգոր է ճանաչուած ապագայ պատմիչներից:

Արդէն փլուած Զուարթնոց եկեղեցու նմանօրինակը Աստղիկ ասելով (հրատ. Կ. Եղեաց 1885 թուին եր. 282. գլ. 10 է) Գաղիկ թագաւորը շինում է Անիում փրկչի 1000 թուականին: Աստղիկը (եր. 282 գլ. 10 է) Անիում շինուած եկեղեցին և նրա տեղը նկարագրում է ըստ այսմ. «Յայնմ ժամանակի յորում ընոյր լրութեամբ ամն Ս. մարմնանաւոյ... Տեսուն մերոյ... Գաղիկ արքայ Հայոց խորհուրդ բարի ի յանձին կալեալ՝ զմեծաշէն եկեղեցին, որ ի Քաղաքուղաշտի, անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ եւ կործանեալ՝ կամեցաւ նոյնաձև չափով և յօրինուածով յարգարել ի քաղաքին Անուոյ, հիմնարկեալ ի կուսէ Ծաղկոցաձոր ձորոյն, ի բարձրաւանդակ տեղւոջն, տարփատենչ տեսողացն, մեծատաշ, վիմարգեան կոփածոյ վիմօք, մանուածոյ քանդակաւ յօրինեալ, լոյսանցոյց պատուհանօք, երբակի զբանց զբանդեօք, սքանչելատես տեսլեամբ զմբէթաւորեալ, գունակ գերամբարձ և երկնանման գնդին»:


Անիում եղած բոլորակ եկեղեցիներն են՝ 1-ին Ծաղկոցաձորին մօտ Աբուղամբենց Ս. Գրիգորը, տեղի զիրքով նման Աստղիկ ասածին, բայց շինուածքով և շինութեան թուականով՝ անհամապատասխան, որովհետև այս եկեղեցին չունի միջին սներ, և զմբէթը հաստատուած է վեց որմնասներ ի վերայ, շատ փոքր է և, Ալիշանի առաջ բերած արձանագրութեամբ (Նիրակ եր. 51—54), շինուած է Հայոց ՆԶԹ, ուրեմն և Փրկչի 1040 թուականին: 2-րդ Փրկչի եկեղեցին, համեմատաբար մեծ Աբուղամբենց եկեղեցուց, բայց Ծաղկոցաձորի ձորաբաշին չէ, չունի միջին սներ, զմբէթը հաստատուած է ութ որմնասների վերայ, ունի եօթն պայտաձև և մի հատ էլ, արևմտեան կողմը, քառակուսի խորշ: Այս

եկեղեցին շինուած է Հայոց ՆՁԵ. և Փրկչի 1036 թուին, փոքրկութեամբ և շինութեան թուականով անհամապատասխան Զուարթնոց եկեղեցուն և տեղադրութեամբ անհամապատասխան Ասողկի նկարագրութեանը: Շիրակում՝ մեր անսած բոլորակ եկեղեցիների կարգում, իւր գեղեցկութեամբ և նրբաշակ շինութեամբ ուշագրաւ է Խժկօնքի (Բէշքիլիսա) Ս. Սարգիս եկեղեցին: Անիից 20 վերստաչափ հեռի՝ գէպի արեւմուտք: Այս եկեղեցին շինել է Վեստ Սարգիս Հայոց՝ ՆՁԲ. ուրեմն և Փրկչի 1033 թուականին: Կրկնում ենք, այս եկեղեցիներէից ոչ մէկն էլ Զուարթնոց եկեղեցու մեծութիւնը չունենանով՝ կարող են միայն նրա մանրադիրը համարուել իսկ շինութեան թուականով ու տեղադրութեամբ ամենեւին չեն համապատասխանում Ասողկի նկարագրածին: Դրանց շինուելը ամենաքիչը 33 տարով ուշ է որոշուած թուականից: Զուարթնոց եկեղեցուն մեծութեան և գեղեցկութեան կողմից նման կարող է կոչուել միայն Անւոյ Կաթուղիկէն, տեղադրութեամբ էլ, եթէ Ասողկի «հիմնարկեալ ի կուսէ Մաղկոցակոր ձորոյն» անձուկ մտքով չընդունենք, համապատասխան է. համապատասխան է ըստ Ալիշանի և շինութեան թուականով, միայն ճարտարապետութեամբ և ձևովն տարբերորովհետև Կաթուղիկէն քառանկիւնի է և իւր քանդակների ու շինուածքի համաչափութեամբ ու նրբութեամբ իւր ժամանակի հրաշակերտ: Կաթուղիկէն սկսել էր Սմբատ 980, և աւարտել է Գագիկ թագաւորի կին Կատրամիդէ թագուհին 1001 թուին (Շիրակ եր. 64—73), սակայն շինութեան արձանագրութեան թուականն (Շիրակ եր. 71) ու Սամուէլ Անեցին Կաթուղիկէի աւարտումն գնում են 1010—11 թուականին: Այսպիսով խնդիրը չի լուծւում, թէ Անւոյ այժմ կանգուն մնացած եկեղեցիներէից ո՞րն է Զուարթնոց եկեղեցու ձևով շինուել: Սամուէլ Անեցին, առնելով Ասողկից՝ գրում է. «Սուրբ Գրիգորն գերահոգակ՝ զոր նախ սկիզբն առնու ի շինել թագաւորն Գագիկ ի յԱնի, ի վերայ Մաղկոցաձորոյն վայրօք՝ գաղափար առեալ զլուսազարդ զհրաշալի սուրբ Գրիգորն զշինեալն ի Ներսիսէ հայրապետէ, և կատարեաց զատուածակերտ փարախն բանաւոր հօտին Քրիստոսի ի Ռ. ամի

մարմնանալոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Եր. 104):
Որովհետև արդէն հաւաստիք կայ, որ կաթուղիկէն էլ չէ
Զուարթնոց եկեղեցու ձևով շինուածը, ուրեմն պէտք է
ենթադրել՝ որ այն հիմնովին տապալուել է, և այժմ հետքն
անգամ չըկայ:

Յ. Եպիսկոպոս.

(Կը շարունակուի)



ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍԸ.

Ա.

ՄՏԻԻ ԸՆԹԱՅԲԸ.

Հոգեկան մի քանի յատկութիւններ կան, որոնք ահա-
գին դեր են կատարում մանկական հասակում՝ հիմք դը-
նելով ասպագայի համար մտքերի գործունէութեան, կա-
պակցութեան և կանոնաւոր արտայայտութեան: Եթէ յի-
րաւի անուրանալի է, որ մանուկն իւր առաջին 6—7 տա-
րիներում՝ աւելի շատ բառերի պաշար է ժողովում, քան
մնացած ամբողջ կեանքի ընթացքում՝ նշանակում է այդ-
հասակում նա ունի անգնահատելի հոգեկան յատկութիւն-
ներ, մի թանկագին գանձ, որ դժբաղդաբար նոյն ուժով
ու զօրութեամբ չի գործում յետագայ տարիներում: Ման-
կան այդ անգնահատելի յատկութիւններն են նորա վառ-
երևակայութիւնը, սուր դիտելու ընդունակութիւնը, յիշո-
ղութիւնն ու աշխուժութիւնը: Իւրաքանչիւր հոգեբան—ման-
կավարժ լաւ ըմբռնելով մանկան հոգու այս գլխաւոր յատ-
կութիւններն՝ ըստ այնմ էլ որոշում է, թէ ո՞ր հասակում
և ո՞ր տարիներում հասկանալի կը լինին մանկան այս կամ
այն մտքերն ու գաղափարները, և այդ գիտակցութեան